ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-3-4-Ա

ք. Երևան 08.04.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի ապրիլի 8-ի նիստում քննարկեց 2025 թվականի հունիսի 10-ին արտոնագրային հավատարմատարի թեկնածու Արման Սերգեյի Աբրահամյանի կողմից ներկայացված արտոնագրային հավատարմատարների որակավորման հանձնաժողովի 04.06.2025թ.-ին կայացված որակավորման քննությունը չհանձնած համարելու վերաբերյալ որոշման դեմ բողոքը:

Քննության արդյունքները որոշվել են հարցազրույցի փուլի որակավորման հանձնաժողովի կայացրած երեք դեմ և երկու կողմ ձայների հարաբերակցությամբ որոշմամբ:

Բողոքարկողը իր բողոքում նշել է այն մասին, որ քննության ընթացքում իրեն տրվել են չորս հարցեր, որոնցից երկուսին տրվել են ճիշտ պատասխաններ, իսկ մյուս երկու հարցերի բովանդակային պատասխանները եղել են ճիշտ, սակայն լրացուցիչ հարցերի շրջանակներում իր կողմից թույլ են տրվել վրիպումներ, որոնք թեկնածուի կարծիքով չպետք է էական ազդեցություն ունենային գնահատման վրա:
Սակայն բողոքում բերված չեն պատճառաբանված հիմնավորումներ որակավորման հանձնաժողովի կայացրած որոշման սխալ լինելու վերաբերյալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և որակավորման հանձնաժողովի որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ լրացուցիչ տրվող հարցերի պատասխանները հաճախ կարող են բացահայտել հարցի վերաբերյալ արտոնագրային հավատարմատարի թեկնածուի իմացությունը: Հավանաբար սա է հիմք հանդիսացել որակավորման հանձնաժողովի որոշ անդամների «դեմ» քվեարկելու պատճառը: Ի հավելումն նշենք, որ հաջորդ արտոնագրային հավատարմատարների որակավորման քննության ժամանակ բողոքարկողը չի հաղթահարել թեստավորման փուլը: Չնայած այս քննությունը ուղղակիորեն կապ չունի բողոքի հետ, սակայն կարող է որոշ չափով նկարագրել բողոքարկողի մասնագիտական իմացությունը:

Բողոքարկողը ներկա չէր նիստին և չէր կարող ներկայացնել մանրամասներ և փաստեր իր բողոքը հիմնավորելու համար:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 79-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատարի թեկնածու Արման Սերգեյի Աբրահամյանի կողմից ներկայացված արտոնագրային հավատարմատարների որակավորման հանձնաժողովի 04.06.2025թ.-ին կայացված որակավորման քննությունը չհանձնած համարելու վերաբերյալ որոշման դեմ բողոքը մերժել և որակավորման հանձնաժողովի որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ